# ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Քաղաքային «Կումայրի» թերթի հավելված

1991 թ., հոկտեմբեր № 46: Գինը՝ 50 կոպ.


## ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Արդեն մի քանի անգամ «Կումայրի» թերթում նշվել է տպագրական թղթի թանկացման և մատակարարումների դադարեցման մասին: Նույնիսկ անհավատալի է, որ թղթի մեկ կիլոգրամը 28 կոպեկից հասել է 8—13 ռուբլու: Դրա պատճառով է, որ հանրապետական. շատ թերթեր տպագրվում են ընդհատումներով, կանգնելով փակման վտանգի առաջ:

Բարվոք վիճակում չեն նաև «Կումայրի» թերթը և «Հիշողություն» հավելվածը: Ֆինանսական սուղ միջոցները չեն բավարարում շուկայական թանկ գներով համապատասխան քանակի թուղթ գնելու համար: Անա այս պատճառով է, որ «Հիշողություն» հավելվածը այսուհետև կտպագրվի շորս էջով, մինչև կարգավորվի և վերջնականապես լուծվի թղթի հարցը:

Տպագրական թղթի թանկացման պատճառով «Հիշողության» գինը մնում է անփոփոխ, տպաքանակը պակասում է 2000 օրինակով:



Լուսանկարը՝ Հմ. Կարապետյանի

## ՑԱՎՈՎ ԵՎ ՀՈՒՅՍՈՎ

*Ոչ թե փոխաբերական, այլ բառիս բուն իմաստով մարդկանց սրտերը ջղակծկվում են Հայաստանը պատուհասած տարերքից: Փորձության այս ծանր ժամին հայ ժողովուրդը զգում է, որ ինքը միայնակ չէ, որ իրեն օգնության ձեռք են մեկնել և մեր դժբախտությունը մեզ հետ կիսում են ամբողջ երկիրը, մեր մոլորակը:*

*Ասում են, որ վիշտը մերձեցնում է մարդկանց: Եվ թող տարօրինակ չթվա, բայց մենք հենց այդ պահին զգացինք աշխարհի ժողովուրդների եղբայրության «օրենքը», որ հսկայական բարոյական ուժ է պարունակում:*

*Հայաստանի տուժած շրջանները պետք է վերածնվեն, բարգավաճեն, նոր խինդով լցվեն: Զոհվածների հավերժական հուշարձանը կդառնան նոր տները, պալատները, բուժական ու մանկական հիմնարկները... Դրանց կառուցմանը մեզ կօգնեն մեր հայրենիքի ժողովուրդները: Իսկ դրա համար անհրաժեշտ է ողբերգական պահին լինել կազմակերպված, համահավաք, չմասնատել ուժերը: Պետք է մեր ամբողջ եռանդը նվիրաբերենք գալիք սերնդին, մեր մանուկներին:*

*«Լույս» միավորման մեծաթիվ բանվորական կոլեկտիվը աշխատում է ինքնանվիրումով: Արդեն թողարկվել և աղետի շրջաններ են ուղարկվել լուսացուցիչ քանակությամբ լուսավորման սարքեր, կահույքներ: Միավորման աշխատողները օգնում են վերականգնելու տուժած քաղաքների և գյուղերի էլեկտրացանցը:*

Վ. ԳԱՃՅԱՆ



Կոշտոյան փողոցի բնակելի տները աղետից հետո: Լուսանկարը՝ Հ. Ներսիսյանի

